

38. ՈՐՄՆԱԽԱՉԻ *շրջանակներին.*

ՀԱՅՐ ՍՏԵՓԱՆՈՍ . . . . . .

ՅԱԳԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ. ։ՉԳԲ։ (1345)։

## 4. ՀԻՆ ՍՈՅԼԱՆ

*Նախկինում այստեղ Հին Սոյլանի կողքին շինվել էր Նոր Սոյլանը՝ բաղկացած մի քանի տուն բնակիչներից։ Այժմ այդ ամբողջ տարածության վրա, խճուղու երկու եզրերին, շինվել է քաղաքատիպ տներով բանվորական ավան։ Ավանի արևելյան ծայրին ննում են Հին Սոյլանի ավերակ եկեղեցին իր գավթով, նույնպես ավերակ, իսկ դրանց դիմաց, խճուղու եզրին, կանգնած է սև, մարմարանման քարից մի կոթող, վրան քանդակված խաչ. իսկ տակին, գծերի մեջ՝ արձանագրություն, 14 տող.*



39. ԹՎԱԿ|ԱՆԻՍ ։ՈՀԱ։ (1222) |ԿԱ|Ն|ԿՆԵՑԱ|Ի ԽԼԱՉ|Ս. ՈՎ Ս|ԳԲԱՐՔ Զ|Ց|Ո|ԳՆԱՄԵԳ|Ս ԱՌԱՔ|ԵԱԼ ՅԻՇԻ|ՋԻՔ Ի ՔՍ. |ԵՒ ԱԾ. ՁԵ|Զ ՈԳՈՐՄԻՍՑ|Է|։ |ՏԽՄԱՐ |ԳՐԻՉՍ ՇԱՊՈՒՀ ՅԻՇԵ|ՑԷՔ|։

Ծանոթ. *Հիմնական մասը գրված է խաչքարի հյուսիսային կողի ստորին մասում (11 տող). վերջին երեք տողը, դրչի հիշատակագրությունը՝ արևմտյան երեսին, խաչի տակ։*

Հրատ. *Բաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 352, Ալիշան, 129,* Լուսանկ. 19։

## 5. ՄՈՂ ԱՎԱՆԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ

*Մալիշկա գյուղից 3—4 կիլոմետր դեպի հարավ-արևելք, Արփա գետի աջ ափին, լերկ քարաբլուրների ու կոշկոռների արանքներում, երեք կիլոմետր երկարությամբ տարածվում են մեծ և անտաշ քարերով շինված բազմաթիվ տների ավերակները։ Վայոց ձորի հնագույն բնակատեղիներից մեկի, Մող ավանի ավերակներն են դրանք։ Տեղացիների մեջ ավանդաբար պատմվում է, որ այդ քարե գնգերը երկրաշարժի ժամանակ ժայթքած լավայի սառած բեկորներն են։ Ստ. Օրբելյանն իր աշխատության մեջ առանձին գլուխ է նվիրել երկրաշարժի հետևանքով կործանված Մող ավանին, այս դեպքը կապելով Ստեփանոս իմաստասեր եպիսկո-*